ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

2016 թվականի ներդրումային գործունեության

մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....4

ԲԱԺԻՆ 1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2016 թվականի Ներդրումային ծրագրի կառուցվածքը.....4

ԲԱԺԻՆ 2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2016 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները.....8

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները.....8

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները.....10

ԲԱԺԻՆ 3.«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2016 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները.....11

3.1.Գազափոխադրման համակարգ.....11

3.1.1. Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և արդիականացման նպատակով կատարված ներդրումներ.....11

3.1.2. Գազափոխադրման համակարգի վերակառուցում.....11

3.1.3. Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ.....14

3.2. Գազաբաշխման համակարգ.....17

3.2.1. Նոր բաժանորդների միացում.....17

3.2.2. Գազաբաշխման համակարգի վերակառուցում.....17

3.2.3. Գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման Ծառայությունների ոլորտներում ներդրումներ.....19

ԲԱԺԻՆ 4. Իրականացված ներդրումների ազդեցությունը սպասարկման որակի ցուցանիշների վրա.....25

ԲԱԺԻՆ 5. Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը.....26

5.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը.....26

5.2. Սակագնով փոխհատուցման ենթակա

ներդրումների ծավալը 27

Ամփոփիչ մաս և եզրակացություններ 29

Հղումներ օգտագործված նյութերին.....30

Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2017 թվականի աշխատանքային ծրագրի 20-րդ կետի [Որոշում 1] և արտացոլում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետև՝ ընկերություն) 2016 թվականի գազի համալիրի վերականգնման և զարգացման ներդրումային ծրագրի մոնիթորինգի գնահատականը: Փաստաթուղթը ներառում է ներդրումային ծրագրի և փաստացի կատարված աշխատանքների համադրությունը, իրականացված ծախսերի արդյունավետության, ինչպես նաև՝ սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի վերլուծությունը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2016 թվականի գազի համալիրի վերականգնման և զարգացման ներդրումային ծրագիրը [Որոշում 2, Որոշում 3] և լիցենզավորված գործունեության վերաբերյալ ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը [Հաշվետվություն, Տեղեկատվություն]:

ԲԱԺԻՆ 1.
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2016 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2016 թվականի տարեկան ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր տարբեր միջոցառումներ իրականացնել գազափոխադրման և գազաբաշխման համակարգերում՝ դրանց վերակառուցման, վերազինման, նոր բաժանորդների միացման և այլ հիմնախնդիրների լուծման նպատակով: Ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով նախատեսվում էր նաև ներդրումներ իրականացնել տարբեր սարքավորումների, ժամանակակից տեխնիկա տեխնոլոգիաների, մեքենաների և մեխանիզմների ձեռքբերման ուղղությամբ:

Ներդրումային ծրագրով նախատեսված էր 2016 թվականի ընթացքում իրականացնել 7 625,1[1] մլն դրամի ներդրումներ, այդ թվում՝

- Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և ընդլայնման ուղղությամբ ներդրումներ՝ 919,7 մլն դրամ,
- գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղությամբ ներդրումներ՝ 1 304,4 մլն դրամ,
- գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 604,6 մլն դրամ,
- նոր բաժանորդների միացման ուղղությամբ ներդրումներ՝ 688,1 մլն դրամ,
- գազաբաշխման համակարգի վերակառուցման ուղղությամբ ներդրումներ՝ 1 784,5 մլն դրամ,
- գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 2 323,8 մլն դրամ:

- այդ թվում՝ ազդանշանային սարքերի ինքնաշխատ վթարային կափույրների տեղակայման ուղղությամբ ներդրումներ՝ 310,2 մլն դրամ:

Ստորև՝ գրաֆիկ 1-ում, ներկայացված է ընկերության 2016 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումն ըստ նպատակային ուղղությունների:

[1]Սույն վերլուծական տեղեկանքում նշված բոլոր գումարները չեն ներառում ԱԱՀ-ն, բացառության մարդատար ավտոմեքենաների ձեռբերման գումարների:

Գրաֆիկ 1



Ինչպես երևում է գրաֆիկ 1-ից, Աբովյանի ԳՍՊԿ-ի ընդլայնման, վերականգնման, վերակառուցման և արդիականացման նպատակով նախատեսվում էր ներդնել 919,7 մլն դրամ, որի գերակշիռ մասը՝ 466,4 մլն դրամը, նախատեսվում էր ուղղել շահագործվող 3 գազահորերի վերականգնման և վերակառուցման աշխատանքների իրականացմանը, իսկ 202,8 նոր ճնշակայանի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատրաստմանը:

Գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղությամբ նախատեսվող ներդրումների մեծ մասը, 679,9 մլն դրամը, նախատեսվում էր ուղղել վնասված մայրուղային գազատարերի վերականգնման, վերատեղադրման և փոխարինման աշխատանքներին: Նախատեսվում էր նաև կառուցել և արդիականացնել գազաբաշխիչ կայանները, չափիչ հանգույցները և այլ ինժեներական ենթակառուցվածքներ, վերականգնել գազաբաշխիչ կայանների և չափիչ հանգույցների էներգամատակարարման համակարգերը, կառուցել, վերականգնել և արդիականացնել էլեկտրաքիմիական պաշտպանության կայանները:

Ներդրումային ծրագրի 604,6 մլն դրամը նախատեսվում էր ներդնել գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով՝ այդ թվում նոր շենք շինությունների կառուցման և շենք շինությունների վերականգնման և վերակառուցման ուղղություններով, նաև նախատեսվում էր հաշվառման համակարգի արդիականացման նպատակով ձեռքբերել սարքավորումներ, գործիքներ, իսկ հաշվառման ցուցանիշների բարելավման նպատակով ներդնել ժամանակակից տեխնիկա և տեխնոլոգիաներ: Նշված ուղղությամբ համաձայնեցված ծավալի գերակշիռ մասը՝ 490,9 մլն դրամը, նախատեսվում էր ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերման նպատակով:

688,1 մլն դրամը նախատեսված էր 9 000 նոր բաժանորդների մոտ գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի տեղադրման և գազաբաշխիչ ցանցի նոր գազատարերի կառուցման նպատակով:

Գազաբաշխման համակարգի վերակառուցման ուղղությամբ ներդրումների մեծ մասը՝ 1466,8 մլն դրամը, նախատեսված էր գազաբաշխիչ ցանցի գազատարերի վերականգնման և վերակառուցման համար: Նշված ուղղությամբ նախատեսվում էր նաև բնական գազի կենցաղային հաշվիչները և տեղադրման հանգույցները տեղափոխել՝ մոտեցման և սպասարկման համար անարգել և մատչելի տարածք, ԳԳՄ-ի սպասարկման տարածքներում տեղակայման հանգույցների վերականգնում՝ շարքից դուրս եկած արկղերի փոխարինում, էլեկտրաքիմիական պաշտպանության կայանների կառուցում և այլն:

Գազաբաշխման համակարգում նախատեսվող ներդրումների շրջանակում նախատեսվում էր 11 000 գազասպառողների մոտ ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների ձեռքբերում և տեղադրում:

Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով նախատեսվող ներդրումների 2 323,8 մլն դրամը նախատեսված է գազաբաշխման համակարգի հաշվառման համակարգի արդիականացման և ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրման նպատակով: Այս ուղղությամբ նախատեսվում էր նաև ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով ձեռք բերել համակարգչային և կազմակերպչական տեխնիկա, գրասենյակային գույք, մեքենա մեխանիզմներ, վերականգնել ընկերության արտադրական և վարչական շենքերը, ընդլայնել և արդիականացնել ընկերության կապի համակարգը, քաղաքացիական

պաշտպանության կազմակերպման համար ձեռք բերել անհրաժեշտ սարքավորումներ և այլն:

ԲԱԺԻՆ 2.
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2016 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության՝ ընկերությունը 2016 թվականի ընթացքում կատարել է 6 195,2 մլն դրամի կապիտալացվող աշխատանքներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 5 567,7 մլն դրամի հիմնական միջոցներ: Մնացած 627,5 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ կամ ավարտվել են, սակայն դեռևս չեն շահագործվում:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է ընկերության կողմից 2016 թվականի ընթացքում փաստացի իրականացված՝ ավարտված և հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

հ/հ	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը	Փաստացի իրականացված՝ ավարտված ներդրումներ	Ծրագրի կատարման ցուցանիշը	Իրականացված ներդրումներ՝ այդ թվում շահագործման չհանձնված		
					2015թ.	2015թ. սկզբի դրությամբ (մնացորդ)	Ընդամենը
		մլն դրամ	մլն դրամ	%	մլն դրամ	մլն դրամ	մլն դրամ
1	2	3	4	5	6	7	8
1	Գազափոխադրման համակարգի Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցմանն ու ընդլայնմանն ուղղված ներդրումներ	919,7	31,248	3%	358,0	171,2	529,2

(շարունակություն)

2	Գազափոխադրման համակարգի վերակառուցմանն ուղղված ներդրումներ	1 304,4	224,163	17%	219,9	43,1	263,0
3	Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	604,6	538,789	89%	528,6	10,1	538,8
4	Նոր բաժանորդների միացմանն ուղղված ներդրումներ	688,1	686,918	100%	686,9	-	686,9
5	Գազաբաշխման համակարգի վերակառուցմանն ուղղված	1 784,5	2 001,032	112%	1 999,6	40,2	2 039,9
6	Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	2 323,8	2 085,570	90%	2 047,7	89,7	2 137,4
6,1	*Ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների ձեռքբերում և տեղադրում*	*310,2*	*301,143*	97%	301,1	-	301,1
	Ընդամենը	**7 625,1**	**5 567,72**	**73%**	**5 840,8**	**354,4**	**6 195,201**

Ինչպես երևում է Աղյուսակ 1-ից ընկերությունը ներդրումային ծրագիրը կատարել է 73%-ով:

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են 2016 թվականի ընթացքում կատարված ներդրումների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2

№	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Իրականացված		Շահագործման հանձնված	
		մլն դրամ	%	մլն դրամ	%
1	2	3	4	5	6
1	**Նախորդ ժամանակահատվածի անավարտ աշխատանքներ**	**354,4**	**6%**	**175,0**	**3%**
2	**Կապալառու կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներից**	**2 446,9**	**39%**	**2 085,9**	**34%**
3	**Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից**	**1 266,8**	**20%**	**1 266,8**	**20%**
4	**Սեփական ուժերով կատարված աշխատանքներից**	**2 127,1**	**34%**	**2 040,0**	**33%**
4.1	*աշխատանքի վճարման գծով ծախսումներ*	183,9		183,9	
4.2	*նյութական ծախսումներ*	1 107,5		1 107,4	
4.3	*տեղակայման ենթակա սարքավորումներ*	705,9		705,9	
4.4	*նախագծային աշխատանքներ*	128,9		41,9	
4.5	*այլ*	0,9		0,9	
	ԸՆԴԱՄԵՆԸ	**6 195,2**		**5 567,7**	

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 2-ից, ներդրումներն իրականացվել են ինչպես կողմնակի կազմակերպությունների միջոցով, այնպես էլ՝ սեփական ուժերով: Հարկ է նշել, որ զգալի մեծացել է սեփական ուժերով կատարված աշխատանքների համամասնությունը: Եթե 2015 թվականի ընթացքում սեփական ուժերով կատարվել էր ընդհանուր ներդրումների 24%-ը, ապա 2016 թվականի ընթացքում այն կազմել է ընդհանուրի 34%-ը:

ԲԱԺԻՆ 3.
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2016 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

3.1. Գազափոխադրման համակարգ

Ստորև, ըստ ուղղությունների, ներկայացված են ընկերության կողմից 2016 թվականի ընթացքում գազափոխադրման համակարգում իրականացված ներդրումների ծավալները:

3.1.1. Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցմանն ու ընդլայնմանն ուղղված ներդրումներ

2016 թվականի ընթացքում Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և ընդլայնման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 919,7 մլն դրամ՝ նոր ճնշակայանի նախագծման, նոր գազահորերի շինարարության, շահագործվող հորերի, շահագործվող ճնշակայանի և արդյունաբերական հրապարակի կոմպրեսորային արտադրամասի վերականգնման և վերակառուցման, էներգահամակարգի և պոմպակայանի վերականգնման և վերազինման և այլ նպատակներով: Փաստացի իրականացվել են 529,2 մլն դրամի աշխատանքներ, որից շահագործման են հանձնվել «*Պոմպակայանի վերականգնում և վերազինում*» ենթաուղղությամբ նախատեսված աշխատանքները՝ 31,2 մլն դրամ արժեքով:

3.1.2. Գազափոխադրման համակարգի վերակառուցում

Գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղությամբ 2016 թվականին համաձայնեցված էր 1 304,4 մլն դրամ՝ նոր մայրուղային գազատարերի կառուցման, գործող գազատարերի վերականգման, վերատեղադրման և փոխարինման, գազաբաշխիչ կայանների և չափիչ հանգույցների և այլ տեխնոլոգիական շինությունների կառուցման, վերականգնման և արդիականացման, էլեկտրամատակարարման և ջերմամատակարարման համակարգերի վերականգնման և արդիականացման, ԷՔՊ համակարգի նոր կայանքների կառուցման, վերականգնման և արդիականացման նպատակով: Փաստացի իրականացվել են 263 մլն դրամի ներդրումներ: Այս ուղղության.

«Նոր մայրուղային գազատարերի կառուցում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 55,3 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 24,9 մլն դրամի ներդրումներ, որոնք շահագործման չեն հանձնվել:

Մայրուղային գազատարերի վերականգնում, վերակառուցում ենթաուղղությամբ 2016 թվականին համաձայնեցված էր 679,9 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 0,8 մլն դրամի ներդրումներ:

«Կարմիր Կամուրջ-Ալավերդի Դպ-700 մայրուղային գազատարի գազուղու վերականգնում», «Վանաձոր-Գյումրի Դպ-700 մայրուղային գազատար՝ մեկուսիչ շերտի վերականգնում խողովակի խոտանումով», և «Գյումրի-Արմավիր Դպ-700 մայրուղային գազատար՝ մեկուսիչ շերտի վերականգնում խողովակի խոտանումով» ենթաուղղություններով իրականացվել են համապատասխանաբար 0,24, 0,25, և 0,28 մլն դրամի ներդրումներ, որոնք դեռևս շահագործման չեն հանձնվել:

Նոր գազաբաշխիչ կայանների, չափիչ հանգույցների և այլ տեխնոլոգիական շինությունների կառուցում ենթաուղղությամբ 2016 թվականին նախատեսվում էր ներդնել 3,3 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 10,4 մլն դրամի աշխատանքներ, որոնք շահագործման չեն հանձնվել: Աշխատանքներն իրականացվել են «Կարմիր Կամուրջ-Սևքար-Բերդ մայրուղային գազատարի վրա (14,5 կմ) գազի մաքրման կայանի կառուցում» ենթաուղղությամբ՝ 7,2 մլն դրամ, և «Գավառի ԳԲԿ-ի կառուցում» ենթաուղղությամբ 3,2 մլն դրամ:

«Գազաբաշխիչ կայանների, չափիչ հանգույցների և այլ տեխնոլոգիական շինությունների վերականգնում, վերակառուցում և արդիականացում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 385,9 մլն դրամ, որից.

«Գազաբաշխիչ կայանների վերականգնում, վերակառուցում և արդիականացում» ենթաուղղությամբ 2016 թվականին համաձայնեցված էր 139,0 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 13,1 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 12,8 մլն դրամի աշխատանքներ հանձնվել են շահագործման.

«Տարոնի ԳԲԿ-ի վերականգնում և վերակառուցում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 29,8 մլն դրամ: Տվյալ ուղղությամբ իրականացվել և շահագործման են հանձնվել 3,7 մլն դրամի ներդրումներ:

«Գառ-Գառ ԳԲԿ-ի վերականգնում և վերակառուցում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 15,4 մլն դրամ: Տվյալ ուղղությամբ իրականացվել և շահագործման են հանձնվել 9,1 մլն դրամի ներդրումներ:

«Չափիչ հանգույցների վերականգնում, վերակառուցում» ենթաուղղությամբ 2016 թվականին համաձայնեցված էր 247,0 մլն դրամ: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 14,9 մլն դրամի աշխատանքներ՝ «Կողբ» ՉՀ-ի վերականգնում և վերակառուցում» ենթաուղղությամբ 3,8 մլն դրամի և «ԳԲԿ-ներում չափիչ հանգույցների արդիականացում՝ նոր սերնդի միկրոպրոցեսորային ծախսաչափային համալիրների տեղադրում (”FloBoss-103” տիպի կամ նմանատիպ) ենթաուղղությամբ՝ 11,1 մլն դրամի աշխատանքներ:

«Էլեկտրամատակարարման և ջերմամատակարարման համակարգերի վերականգնում և արդիականացում» ենթաուղղությամբ 2016 թվականին նախատեսվում էր 14,2 մլն դրամի ներդրումներ իրականացնել: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 7,7 մլն դրամի աշխատանքներ 160 կՎԱ հզորությամբ լրակազմ տրանսֆորմատորային ենթակայանի ձեռքբերման և տեղադրման համար:

«ԷՔՊ համակարգի նոր կայանքների կառուցում» ենթաուղղությամբ 2016 թվականին նախատեսվում էր ներդնել 122,6 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 120,4 մլն դրամի ներդրումներ, որից 120,2 մլն դրամի աշխատանքներ, 13 կայանքների տեղադրման ուղղությամբ, հանձնվել են շահագործման:

«ԷՔՊ համակարգի վերականգնում և արդիականացում» ենթաուղղությամբ 2016 թվականին նախատեսվում էր ներդնել 43,3 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 1,2 մլն դրամի աշխատանքներ, որոնք շահագործման չեն հանձնվել:

Գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղության մնացած ենթաուղղություններով 2016 թվականին ներդրումներ չեն իրականացվել:

Վերը նշված աշխատանքների ծավալում ներկայացված են 38,5 մլն դրամ ընդհանուր ծավալով աշխատանքներ՝ որոնք ներդրումային ծրագրով համաձայնեցված չեն:

3.1.3. Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ

Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով 2016 թվականին նախատեսվում էր 604,6 մլն դրամով ձեռք բերել ժամանակակից տեխնիկա և տեխնոլոգիա, ճնշման և ջերմաստիճանի դյուրակիր կարգաբերիչներ, մանոմետրներ, օպերատորների համար կառուցել 1 տուն, վերանորոգել աշխատասենյակներ, ձեռք բերել ավտոտրանսպորտային միջոցներ, մեխանիզմներ, հողատարածքներ և այլն:

Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 538,8 մլն դրամի ներդրումներ:

«Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդնում» ուղղությամբ նախատեսվում էր 29,6 մլն դրամի ներդրումներ իրականացնել: Փաստացի ձեռք են բերվել 12,1 մլն դրամի հիմնական միջոցներ:

«Ճնշման էլեկտրոնային դյուրակիր կարգաբերիչների ձեռքբերում» ենթաուղղություններով նախատեսվում էր ձեռք բերել 2 էլեկտրոնային դյուրակիր կարգաբերիչներ՝ 21,4 մլն դրամ ընդհանուր արժեքով: Փաստացի ձեռք է բերվել մեկ կարգաբերիչ (կալիբրատոր) 10,1 մլն դրամ արժեքով:

«Օրինակելի մանոմետրերի ձեռքբերում և տեղադրում» ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 3,4 մլն դրամ՝ 15 սարքերի ձեռքբերման ուղղությամբ: Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 10 մանոմետր՝ 2,0 մլն դրամ ընդհանուր արժեքով:

«Նոր շենքերի և շինությունների կառուցում» ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 47,1 մլն դրամ՝ Արմավիրի ԳԲԿ-ի օպերատորի նոր տան կառուցման նպատակով: Փաստացի իրականացվել են 47,0 մլն դրամի աշխատանքներ:

«Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում» ուղղությամբ 2016 թվականին նախատեսվում էր ձեռք բերել 490,9 մլն դրամ ընդհանուր արժեքով 29 միավոր տարբեր մեքենա-մեխանիզմներ: Փաստացի ձեռք են բերվել 27 մեքենա-մեխանիզմներ՝ 479,6 մլն դրամ ընդհանուր արժեքով:

«Էքսկավատոր-հիդրավլիկ անիվավոր, 0.38մ^3 շերեփի տարողությամբ» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 74,8 մլն դրամ՝ 2 էքսկավատորի ձեռքբերման նպատակով, որոնք ձեռք են բերվել և շահագործման հանձնվել:

«Էքսկավատոր-հիդրավլիկ անիվավոր 0,8մ³ շերեփի տարողությամբ» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 77,8 մլն դրամ՝ 1 էքսկավատորի ձեռքբերման նպատակով, որը փաստացի ձեռք է բերվել և շահագործման հանձնվել:

«Էքսկավատոր-հիդրավլիկ թրթուռավոր 1,5մ³ շերեփի տարողությամբ» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 72,0 մլն դրամ՝ 1 էքսկավատորի ձեռքբերման նպատակով, որը փաստացի ձեռք է բերվել և շահագործման հանձնվել:

«Շարժական օդային մղիչ՝ ՊԿՍԴ-5,25 մակնիշի կամ նմանատիպ» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 14,6 մլն դրամ՝ 2 օդային մղիչ ձեռք բերելու նպատակով, որոնք փաստացի ձեռք է բերվել և շահագործման հանձնվել:

«Շարժական էլեկտրազոդիչ ագրեգատ» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 22,1 մլն դրամ՝ 8 ագրեգատի ձեռքբերման նպատակով, որոնք փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել:

«Բուլդոզեր 125 կՎտ հզորությամբ» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 35,8 մլն դրամ, որը փաստացի ձեռք է բերվել և շահագործման հանձնվել:

«Խողովակամբարձիչ՝ ТР 20.22.01 մակնիշի կամ նմանատիպ» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 57,7 մլն դրամ, որը փաստացի ձեռք է բերվել և շահագործման հանձնվել:

«Ավտոամբարձիչ՝ КС-45717А-1Р МАЗ-6312 մակնիշի կամ նմանատիպ» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 27,7 մլն դրամ, որը փաստացի ձեռք է բերվել և շահագործման հանձնվել:

«Վթարային մեքենա՝ УАЗ 390995 մակնիշի կամ նմանատիպ» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 14,8 մլն դրամ 3 մեքենա ձեռքբերելու նպատակով, որոնք փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել:

«Բեռնամարդատար ավտոմեքենա՝ УАЗ 2206 մակնիշի կամ նմանատիպ» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 9,9 մլն դրամ՝ 2 մեքենաներ ձեռքբերելու նպատակով: Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 11,9 մլն դրամ արժեքով 2 մեքենաներ:

«Բեռնատար ավտոմեքենա՝ УАЗ 3303 մակնիշի կամ նմանատիպ» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 4,8 մլն դրամ՝ 1 մեքենա ձեռքբերելու նպատակով, որը փաստացի ձեռք է բերվել և շահագործման հանձնվել:

«Բեռնատար ավտոմեքենա՝ ԳԱԶ-3309 մակնիշի կամ նմանատիպ» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 8,7 մլն դրամ՝ 1 մեքենա ձեռքբերելու նպատակով, որը փաստացի ձեռք է բերվել և շահագործման հանձնվել:

«Խողովակակիր 12մ կիսակցորդով՝ ԿԱՄԱԶ-65116 մակնիշի կամ նմանատիպ» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 27,1 մլն դրամ: Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 27,1 մլն դրամ արժեքով մեկ մեքենա *և մեկ կիսակցորդ*:

«Ինքնաթափ ավտոմեքենա՝ ՄԱԶ-6501Բ5 մակնիշի կամ նմանատիպ» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 20,3 մլն դրամ՝ 1 մեքենա ձեռքբերելու նպատակով, որը փաստացի ձեռք է բերվել և շահագործման հանձնվել:

«Մարդատար ավտոմեքենա՝ ՎԱԶ_21214 մակնիշի կամ նմանատիպ» ձեռքբերման ուղղությամբ համաձայնեցված էր 9,6 մլն դրամ՝ 2 մարդատար մեքենա ձեռքբերելու համար, որոնք փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել:

«Գազափոխադրման համակարգի այլ ուղղություններով ներդրումներ» ուղղության մնացած ենթաուղղություններով 2016 թվականին ներդրումներ չեն իրականացվել:

3.2. Գազաբաշխման համակարգ

Ստորև, ըստ ուղղությունների, ներկայացված է ընկերության կողմից 2016 թվականի ընթացքում գազաբաշխման համակարգում իրականացված ներդրումների ծավալները:

3.2.1. Նոր բաժանորդների միացում

Այս նպատակով 2016 թվականին նախատեսված էր 447,1 մլն դրամ 9 000 կոմպլեկտ բնական գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի ձեռքբերման և տեղադրման նպատակով և 241,0 մլն դրամ գազաբաշխիչ ցանցի նոր գազատարերի կառուցման (ցանցի ընդլայնում) նպատակով:

Փաստացի ձեռք են բերվել և տեղակայվել 8 604 գազահաշվիչներ՝ 402,4 մլն դրամ ընդհանուր արժեքով: Արդյունքում 2016 թվականի ընթացքում բնական գազի համակարգին միացել են 8 595 բաժանորդ և 2017 թվականի տարեսկզբի դրությամբ բնական գազի բաժանորդների ընդհանուր թիվը կազմել է 679 421:

«Գազաբաշխիչ ցանցի նոր գազատարների կառուցում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 241,0 մլն դրամի ներդրումներ, որից 65,4 մլն դրամը Արագածոտնի մարզի Սադունց գյուղի գազաֆիկացման նպատակով և 175,6 մլն դրամ Արարատի մարզի Արբաթ գյուղի գազաֆիկացման նպատակով: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 63,9 և 178,9 մլն դրամ արժեքով ներդրումներ համապատասխանաբար Արագածոտնի մարզի Սադունց գյուղի գազաֆիկացման և Արարատի մարզի Արբաթ գյուղի գազաֆիկացման նպատակով:

Տվյալ ուղղությամբ ավարտված ներդրումների ծավալում ներկայացված են նաև ծրագրից դուրս իրականացված 41,6 մլն դրամ ծավալով ներդրումներ՝ 2 342 հատ կենցաղային գազահաշվիչների փոխարինման ուղղությամբ, որոնք նվազեցվել են ավարտված ներդրումների ծավալներից:

3.2.2. Գազաբաշխման համակարգի վերակառուցում

Գազաբաշխման համակարգի վերակառուցման նպատակով նախատեսվում էր ներդնել 1 784,5 մլն դրամ՝ գազատարերի վերականգնման և վերակառուցման, բնական գազի կենցաղային հաշվիչների և տեղադրման հանգույցների տեղափոխման, ԳԳՄ-րի սպասարկման տարածքներում տեղակայման հանգույցների վերականգնման,

ԳԿԿ/ՊԳԿԿ սարքերի և սարքավորումների վերականգնման, վերակառուցման և արդիականացման, էլեկտրաքիմիական պաշտպանիչ կայանների կառուցման, վերականգնման և արդիականացման ինչպես նաև Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետ կապված միջոցառումների և Էլեկտրամատակարարման և ջերմամատակարարման համակարգերի վերականգնման և արդիականացման ուղղություններով:

Փաստացի ներդրվել է 2 035,2 մլն դրամ, որից 1 997,5 մլն դրամի աշխատանքները ավարտվել են:

«Գազաբաշխիչ ցանցի գազատարերի վերականգնում և վերակառուցում» ենթաուղղությամբ 2016 թվականին նախատեսվում էր ներդնել 1 466,8 մլն դրամ: Փաստացի ներդրվել է 1 920,2 մլն դրամ, որից 1 882,7 մլն դրամի աշխատանքներ ավարտվել են:

«ԳԳՄ-րի սպասարկման տարածքներում հաշվիչների տեղակայման հանգույցների վերականգնում՝ շարքից դուրս եկած արկղերի փոխարինում» ենթաուղղությամբ 2016 թվականին նախատեսվում էր ներդնել 94 մլն դրամ: Փաստացի ներդրվել է 98,2 մլն դրամ, որոնք ամբողջությամբ ավարտվել են:

«ԳԿԿ/ՊԳԿԿ սարքերի և սարքավորումների վերականգնում, վերակառուցում և արդիականացում» ենթաուղղությամբ 2016 թվականին նախատեսվում էր ներդնել 28,0 մլն դրամ ԳԿԿ/ՊԳԿԿ-ներում բացակա շրջանցման գծերի և ապահովիչ արտանետող կափույրների ձեռքբերման և տեղադրման նպատակով: Փաստացի ներդրվել և շահագործման է հանձնվել 12,9 մլն դրամ:

«Էլեկտրամատակարարման և ջերմամատակարարման համակարգերի վերականգնում և արդիականացում» ենթաուղղություններով 2016 թվականին նախատեսվում էր 13,1 մլն դրամ ներդնել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 6/0.4 կվ ենթակայանի 400 կՎԱ տրանսֆորմատորի ձեռքբման և տեղադրման, ինչպես նաև վարչատնտեսական շենքերի ջեռուցման համակարգերի կապիտալ վերանորոգման ուղղությամբ:

Փաստացի իրականացվել են 3,9 մլն դրամի ներդրումների 6/0,4 կՎ ենթակայանի 250կՎ տրանսֆորմատորը 400կՎ-ով փոխարինման և էլեկտրոնային տաքացուցիչների ձեռքբերման ուղղություններով: Իրականացված աշխատանքների ծավալից 3,7 մլն դրամը հանձնվել է շահագործման:

Տվյալ ուղղությամբ ավարտված ներդրումների ծավալում ներկայացված են նաև ծրագրից դուրս իրականացված ներդրումներ՝ 3,5 մլն դրամ ծավալով, որոնք նույնպես նվազեցվել են ավարտված ներդրումների ծավալներից:

Գազաբաշխման համակարգի վերակառուցման ուղղության մնացած ենթաուղղություններով 2016 թվականին ներդրումներ չեն իրականացվել:

3.2.3. Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ

Այս նպատակով 2016 թվականին հաշվառման համակարգի վերականգնման, վերակառուցման և արդիականացման, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների, համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի ձեռքբերման, ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերման և վերասարքավորման, շենքերի և շինությունների վերականգնման և վերակառուցման, հողատարածքների, շենքերի, շինությունների և այլ անշարժ գույքի ձեռքբերման, կորպորատիվ տեխնոլոգիական կապի համակարգի ընդլայնման և արդիականացման, և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման նպատակով նախատեսվում էր իրականացնել 2 323,8 մլն դրամի ներդրումներ:

Հաշվետու տարում **«Բնական գազի հաշվառման համակարգի վերականգնում, վերակառուցում և արդիականացում»** ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 388,5 մլն դրամ՝ ճնշման և ջերմաստիճանի էլեկտրոնային ճշտիչների, էլեկտրոնային ճշտիչներով համալրված անդրադարձային գազահաշվիչների ծախսաչափային հանգույցների (ներառյալ համապատասխան սարքավորումներով համալրված արկղերը), դիսկրետ չափիչ օղակներում ճնշման անկման սկզբունքով աշխատող ծախսաչափային հանգույցների ձեռքբերման և տեղադրման նպատակով:

Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 322,3 մլն դրամի ներդրումներ:

Այս ենթաուղղության *«Մեմբրանային գազահաշվիչների համալրման համար ճնշման և ջերմաստիճանի էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերում և տեղադրում*

(ներառյալ՝ արկղերի ձեռքբերումը)» ենթաուղղությամբ նախատեսվում էր 216,8 մլն դրամ ուղղել 800 էլեկտրոնային ճշտիչներ ձեռքբերելու և տեղակայելու նպատակով:

Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 194,2 մլն դրամի ներդրումներ՝ 653 ճշտիչների ձեռքբերման և տեղադրման նպատակով:

«Էլեկտրոնային ճշտիչներով համալրված անդրադարձային գազահաշվիչների ծախսաչափային հանգույցների (ներառյալ համապատասխան սարքավորումներով համալրված արկղերը) ձեռքբերում և տեղադրում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 156 մլն դրամ ներդնել 100 ծախսաչափային հանգույցների ձեռքբերման և տեղակայման նպատակով:

Փաստացի ներդրվել է 110,6 մլն դրամ, որի արդյունքում տեղակայվել են 81 գազահաշվիչներ՝ իրենց ծախսաչափային հանգույցներով:

«Դիսկրետ չափիչ օղակներում ճնշման անկման սկզբունքով աշխատող ծախսաչափային հանգույցների ձեռքբերում և տեղադրում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 15,7 մլն դրամ ներդնել ծախսաչափային հանգույցների ձեռքբերման և տեղակայման նպատակով: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 17,5 մլն դրամի ներդրումներ՝ 5 ծախսաչափային հանգույցների ձեռքբերման և տեղադրման նպատակով:

«Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում» ենթաուղղությամբ 2016 թվականին համաձայնեցված էր 345,4 մլն դրամ՝ ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների, տեխնիկական մանոմետրերի ձեռքբերման և տեղադրման, տարբեր սարքերի և գործիքների ձեռքբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել և շահագործման են հանձնվել 333,0 մլն դրամի ներդրումներ:

«Ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների ձեռքբերում և տեղադրում» ենթաուղղությամբ 2016 թվականին նախատեսվում էր 310,2 մլն դրամ ներդնել 11 000 ազդանշանային սարքեր և անջատիչ վթարային կափույրներ տեղակայելու ուղղությամբ:

Հաշվետու տարում նշված ենթաուղղությամբ 301,1 մլն դրամ ընդհանուր արժեքով տեղակայվել են 10 477 հատ սարքեր:

«Տեխնիկական մանոմետրի ձեռքբերում և տեղադրում» ուղղությամբ 2016 թվականին նախատեսվում էր ներդնել 15,8 մլն դրամ: Հաշվետու տարում ներդրվել է 12,8 մլն դրամ:

«Չափիչ և հատուկ նշանակության սարքերի և գործիքների ձեռքբերում» ուղղությամբ 2016 թվականին նախատեսվում էր ներդնել 19,3 մլն դրամ: Հաշվետու տարում ներդրվել է 19,1 մլն դրամ:

«Համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի ձեռքբերում» ուղղությամբ 2016 թվականին նախատեսվում էր ներդնել 137,3 մլն դրամ՝ համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով:

Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 117,6 մլն դրամ ընդհանուր արժեքով հիմնական միջոցներ:

«Համակարգչային և կազմակերպչական տեխնիկայի ձեռք բերում» ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 70,5 մլն դրամ: Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 68,4 մլն դրամի հիմնական միջոցներ:

«Գրասենյակային գույքի ձեռքբերում” ենթաուղղությամբ 2016 թվականին նախատեսվում էր ներդնել 33,9 մլն դրամ: Հաշվետու տարում ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 49,1 մլն դրամի հիմնական միջոցներ:

«Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում, վերասարքավորում և հիմնանորոգում» ուղղությամբ 2016 թվականին նախատեսվում էր ներդնել 583,9 մլն դրամ 72 մեքենա-մեխանիզմների ձեռքբերման և 53 մեքենաների վերասարքավորման և 350 սեղմված բնական գազի սարքավորումների համակարգերով վերասարքավորված ավտոմեքենաների գազաբալոնների փոխարինման ուղղությամբ:

Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 520,9 մլն դրամի ներդրումներ:

«Օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 137,5 մլն դրամ ընդհանուր արժեքով ձեռք բերել 24 միջին և ցածր դասի մեքենա և մեկ միկրոավտոբուս:

Թեթև մարդատար օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերում (ցածր դասի) ենթաուղղությամբ նախատեսվում էր 100,8 մլն դրամ ընդհանուր արժեքով ձեռբերել 21 մեքենաներ, որոնք հաշվետու տարում ձեռք են բերվել և շահագործման հանձնվել:

Թեթև մարդատար օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերում (միջին դասի) ենթաուղղությամբ նախատեսվում էր 30,0 մլն դրամ ընդհանուր արժեքով ձեռբերել 3 մեքենաներ: Հաշվետու տարում համաձայնեցված թվով մեքենաներ ձեռք են բերվել 32,2 մլն դրամ ընդհանուր արժեքով:

Միկրոավտոբուսների ձեռքբերում ենթաուղղությամբ նախատեսվում էր 6,7 մլն դրամ ընդհանուր արժեքով ձեռբերել 1 միկրոավտոբուս, որը հաշվետու տարում ձեռք է բերվել և շահագործման հանձնվել:

«Վթարային ավտոմեքենաների ձեռքբերում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 213,7 մլն դրամ ընդհանուր արժեքով ձեռք բերել 24 վթարային մեքենաներ:

«Վթարային բեռնատար ավտոմեքենաներ ֆուրգոն տիպի թեթև մարդատար ավտոմեքենայի բազայի վրա» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 15 մլն դրամ՝ 4 մեքենա ձեռքբերելու նպատակով: Հաշվետու տարում ձեռք են բերվել համաձայնեցված թվով ավտոմեքենաներ՝ 13,7 մլն դրամ ընդհանուր արժեքով:

«4,5 տ բեռնատարողությամբ վթարային-վերանորոգման ավտոմեքենաներ ֆուրգոն տիպի բեռնատար ավտոմեքենայի բազայի վրա» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 149,6 մլն դրամ՝ 10 մեքենա ձեռքբերելու նպատակով: Հաշվետու տարում ձեռք են բերվել համաձայնեցված թվով ավտոմեքենաներ՝ 149,6 մլն դրամ ընդհանուր արժեքով:

«Մինչև 1,5 տ բեռնատարողությամ բարձր անցողունակության վթարային ավտոմեքենաներ ֆուրգոն տիպի ավտոմեքենայի բազայի վրա (ՈՒԱԶ տիպի)» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 49,2 մլն դրամ՝ 10 մեքենա ձեռքբերելու նպատակով, որոնք հաշվետու տարում ձեռք են բերվել և շահագործման հանձնվել:

«Բեռնատար ավտոմեքենաների ձեռքբերում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 62,7 մլն դրամ ընդհանուր արժեքով ձեռք բերել 9 բեռնատար մեքենաներ: Փաստացի ձեռք են բերվել 10 բեռնատար մեքենաներ՝ 60,3 մլն դրամ ընդհանուր արժեքով:

«Հատուկ նշանակության մեքենա՝ էլեկտրաքիմիական պաշտպանության լաբորատորիա” ենթաուղղությամբ նախատեսվում էր 54 մլն դրամով ձեռքբերել Էլեկտրաքիմիական պաշտպանության լաբորատորիա, որը փաստացի ձեռք է բերվել:

«Ավտոկռունկի ձեռքբերում ՄԱՀ տիպի 8-10 տ» ենթաուղղությամբ նախատեսվում էր 20,8 մլն դրամ արժեքով ձեռք բերել 1 մեքենա, որը փաստացի ձեռք է բերվել:

«Մեկ խցիկով և ամբարձիչ մանիպուլյատորով հատուկ ավտոմեքենաների ձեռքբերում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 17,2 մլն դրամ արժեքով ձեռք բերել 1 ամբարձիչ, որը փաստացի ձեռք է բերվել:

«Ավտոմեքենաների վերասարքավորում՝ բնական գազով լիցքավորման համար» ենթաուղղությամբ նախատեսվում էր 26,2 մլն դրամ ծավալով իրականացնել 53 հատ ավտոմեքենաների վերասարքավորում: Փաստացի 22,3 մլն դրամ ծավալով իրականացվել է 44 հատ մարդատար և բեռնա-մարդատար մեքենաների վերասարքավորում:

«Նոր շենքերի և շինությունների կառուցում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 2016 թվականին 55,4 մլն դրամ ներդրումներ ուղղել Շիրակի ԳԳՄ Մարալիկի տարածքային տեղամասի համար նոր վարչական շենքերի կառուցմանը:

Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 58,7 մլն դրամի աշխատանքներ:

«Շենքերի և շինությունների վերականգնում և վերակառուցում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 2016 թվականին 591,4 մլն դրամ ուղղել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչական շենքերի վերականգնման, տարածքների բարեկարգման և թիվ 2 բազայի, ԳԳՄ-ների վարչական շենքերի, ԳԿԿ և այլ շինությունների, վերականգնման և վերակառուցման աշխատանքներ իրականացնելուն: Փաստացի իրականացվել են 459,4 մլն դրամի ներդրումներ, որից 409,8 մլն դրամը հանձնվել է շահագործման:

««Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչական շենքերի, տարածքի և թիվ 2 բազայի վերականգնում և վերակառուցում» ենթաուղղությամբ 2016 թվականին նախատեսվում էր ներդնել 145,8 մլն դրամ:

Փաստացի իրականացվել են 65,2 մլն դրամի ներդրումներ, որից 63,1 մլն դրամը հանձնվել է շահագործման:

«ԳԳՄ-ների վարչական շենքերի, ԳԿԿ և այլ շինությունների վերականգնում, վերակառուցում և արդիականցում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 445,6 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 394,2 մլն դրամի աշխատանքներ, որից 346,6 մլն դրամի աշխատանքները հանձնվել են շահագործման:

«ԳԳՄ-ների համար հողատարածքների, շենքերի, շինությունների և այլ անշարժ գույքի ձեռքբերում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 2016 թվականին 167 մլն դրամ ուղղել Արտաշատի ԳԳՄ-ի համար վարչական շենքի ձեռքբերմանը և Սևանի ԳԳՄ-ի համար վարչական շենքի ձեռքբերմանը (ք.Սևան Նալբանդյան 31 վարչական շենք, հողամաս 0.199 հա): Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 77,6 մլն դրամի աշխատանքներ ք. Արտաշատում 0,4հա, ք. Էջմիածնում 714քմ, ք.Սևանում 0.199 հա և ք. Գավառում 0,2 հա հողատարածքների ձեռքբերման ուղղությամբ:

«Կորպորատիվ տեխնոլոգիական կապի ընդլայնում և արդիականացում» ենթաուղղությամբ 2016 թվականին նախատեսվում էր 38,6 մլն դրամ ուղղել ընկերության վարչական շենքի մասնաշենքերի համակարգչային ցանցի և հեռախոսակապի, ԳԳՄ-րի և տարածքային տեղամասերի վարչական շենքերի համակարգչային ցանցի և հեռախոսակապի վերականգնմանը:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչական շենքի մասնաշենքերի համակարգչային ցանցի և հեռախոսակապի վերականգնման» նպատակով 2016 թվականին համաձայնեցված էր 13,0 մլն դրամ: Հաշվետու տարում իրականացվել և շահագործման են հանձնվել 14,0 մլն դրամ ընդհանուր արժեքով ներդրումներ:

«ԳԳՄ-րի և տարածքային տեղամասերի վարչական շենքերի համակարգչային ցանցի և հեռախոսակապի վերականգնման» նպատակով 2016 թվականին համաձայնեցված էր 25,6 մլն դրամ: Հաշվետու տարում իրականացվել և շահագործման են հանձնվել 18,9 մլն դրամ ընդհանուր արժեքով ներդրումներ:

«Աշխատանքի պաշպանության և հրդեհային անվտանգության համար նյութատեխնիկական միջոցների ձեռքբերում» նպատակով 2016 թվականին համաձայնեցված էր 16,4 մլն դրամ: Հաշվետու տարում իրականացվել և շահագործման են հանձնվել 4,9 մլն դրամ ընդհանուր արժեքով ներդրումներ:

Տվյալ ուղղությամբ ավարտված ներդրումների ծավալում ներկայացված են ծրագրից դուրս իրականացված ներդրումներ՝ 365,4 մլն դրամ ծավալով, որոնք նվազեցվել են ավարտված ներդրումների ծավալներից:

Գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտներում ներդրումների ուղղության մնացած ենթաուղղություններով 2016 թվականին ներդրումներ չեն իրականացվել:

ԲԱԺԻՆ 4.
Իրականացված ներդրումների ազդեցությունը սպասարկման որակի ցուցանիշների վրա

Ընկերության ներդրումային գործունեության արդյունքները գնահատելու նպատակով իրականացվել է նաև սպառողների սպասարկման որակի ցուցանիշների համեմատական վերլուծություն 2015 և 2016 թվականների համար: Մասնավորապես ուսումնասիրվել են ընդհատումների միջին տևողության (SAIDI) և ընդհատումների միջին հաճախականության (քանակի) (SAIFI) ցուցանիշները: Նշված ցուցանիշները բնութագրում են մեկ բաժանորդին բաժին ընկնող անջատումների տևողությունն ու քանակը և համաշխարհային պրակտիկայում օգտագործվում են որպես հուսալիության չափորոշիչներ: Վերլուծության ընթացքում դիտարկվել են միայն այն դեպքերը, երբ ընդհատման պատճառ են հանդիսացել գազամատակարարման ցանցում առաջացած վթարները և փոխադրող ընկերությունը: Կատարված ուսումնասիրության արդյունքներով 2016 թվականի ընթացքում ընդհատումների միջին տևողության ցուցանիշը վատթարացել է միջինում 5,4%-ով՝ կազմելով 300,05 րոպե/բաժանորդ, իսկ ընդհատումների միջին հաճախականության(քանակը) ցուցանիշը միջինում բարելավել է 3%-ով՝ կազմելով 0,42 ընդհատում/բաժանորդ: Ընդհատումների միջին տևողության ցուցանիշի միջին մեծության փոփոխությունը հիմնականում պայմանավորված է Վայոց ձորում և Շիրակի մարզում ցուցանիշների վատթարացմամբ: Մասնավորապես Վայոց Ձորում ընդհատումների միջին տևողության ցուցանիշն աճել է 10,4 անգամ, իսկ ընդհատումների միջին հաճախականության ցուցանիշը՝ 6,1 անգամ: Վայոց Ձորի մարզում վատթարագույն SAIDI և SAIFI ցուցանիշներ գրանցվել են 2016 թվականի 3-րդ եռամսյակում: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ ցուցանիշների վատթարացման պատճառ է հանդիսացել փոխադրող ընկերության պատճառով իրականացված ընդհատումը, որի հետևանքով առավելագույն ընդհատման տողությունը կազմել է 35 ժամ և գազազրկվել են ընդհանուր թվով 5 149 բաժանորդ:

ԲԱԺԻՆ 5.
Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

5.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը

2016 թվականի ընթացքում ընկերության կողմից փաստացի ավարտված 5 567,7 մլն դրամի ներդրումների ծավալում առկա են ներդրումներ, որոնք ենթակա են նվազեցման ընկերության սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, մասնավորապես.

1. 449,1 մլն դրամի ներդրումներ նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ ներդրումային ծրագրով նախապես համաձայնեցված չլինելու պատճառով,
2. Ընկերության կողմից իրականացված գնումների վերլուծության և դրանց՝ համաձայնեցված գների հետ համադրության արդյունքում 2,3 մլն դրամ նվազեցվել է տեղակայման ենթակա սարքերի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների գներից,
3. Համաձայն ընկերության ներկայացրած գրության, աշխատանքի վարձատրության գծով 183,9 մլն դրամից ուղղակի գործարքային եղանակով վարձատրվող աշխատակիցների ուղղությամբ ընկերությունն իրականացրել է 138,6 մլն դրամի ներդրումներ: Հաշվի առնելով նշվածը ներդրումային ծրագրի շրջանակում ավարտված աշխատանքների մասով հաշվետվությամբ ներկայացված աշխատավարձի ուղղությամբ իրականացված ծախսումներից 41,8 մլն դրամը նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:
4. Հաշվի առնելով, որ օտարված (վաճառված) և լուծարված հիմնական միջոցներն այլևս չեն մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը, հիմնական միջոցի օտարման (վաճառքի) արժեքը՝ 19,9 մլն դրամ, իսկ լուծարված հիմնական միջոցների դեպքում լուծարման արդյունքում մուտքագրված նյութերի արժեքը՝ 50,2 մլն դրամ, նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից,

5. Իրականացվել է նաև հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալի համադրում: Համադրման ընթացքում նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը համեմատվել է փաստացի իրականացված ներդրումների ծավալի հետ՝ վերը նշված նվազեցումների իրականացումից հետո: Արդյունքում, հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է 23,4 մլն դրամով, որը և նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ հետևյալ ենթաուղղություններով.
   - Համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի ձեռքբերում՝ 15,2 մլն դրամ,
   - Բնական գազի հաշվառման համակարգի վերականգնում, վերակառուցում և արդիականացում՝ 1,79 մլն դրամ,
   - Գազաբաշխիչ կայանների, չափիչ հանգույցների և այլ տեխնոլոգիական շինությունների վերականգնում, վերակառուցում և արդիականացում՝ 2,05 մլն դրամ,
   - Նոր շենքերի և շինությունների կառուցում՝ 3,3 մլն դրամ,
   - Կորպորատիվ տեխնոլոգիական կապի ընդլայնում և արդիականացում՝ 1,05 մլն դրամ:

5.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Հաշվի առնելով վերլուծության արդյունքները՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2016 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը ամփոփված է աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9

մլն դրամ

1	**Իրականացված ներդրումներ**	**6 195,2**
2	**Անավարտ աշխատանքներ**	**627,5**
3	**2016 թվականի ընթացքում ավարտված ներդրումների ծավալը**	**5 567,7**
4	**Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցված ներդրումներ, այդ թվում՝**	**586,8**
4.1	Ներդրումային ծրագրով չհամաձայնեցված ներդրումներ	449,1
4.2	Գնումների վերլուծության արդյունքում նվազեցված ներդրումներ	2,3
4.3	Սակագնով փոխհատուցված աշխատանքի վճարման գծով ծախսումներ	41,8
4.4	Օտարված (վաճառված) և լուծարված հիմնական միջոցներ	70,2
4.5	Համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ	23,4
5	**2016 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը**	**4 980,9**

Ամփոփիչ մաս և եզրակացություններ

1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2016 թվականի ներդրումային ծրագիրը կատարվել է 73%-ով: Ներդրումները հիմնականում ուղղվել են Գազաբաշխման համակարգին:

2. Գազամատակարարման ցանցին են միացել 8 595 նոր բաժանորդներ և 10 477 բաժանորդների մոտ տեղադրվել են ազդանշանային սարքեր և ինքնաշխատ վթարային կափույրներ: Արդյունքում գազամատակարարման ցանցին միացված բաժանորդների ընդհանուր քանակը կազմել է 679 421:

3. Շահագործման հանձնված հիմնական միջոցներից ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվել են 5 567,7 մլն դրամի ներդրումներ, որոնցից 586,8 մլն դրամի ներդրումները, ընդհանուրի 10,5%-ը, համարվել են ոչ արդյունավետ կամ լիցենզավորված գործունեությանը չմասնակցող և չեն ներառվել փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

4. 2016 թվականի ընթացքում ընդհատումների միջին տևողության ցուցանիշը վատթարացել է միջինում 5,4%-ով՝ կազմելով 300,05 րոպե/բաժանորդ, իսկ ընդհատումների միջին հաճախականության(քանակը) ցուցանիշը միջինում բարելավել է 3%-ով՝ կազմելով 0,42 ընդհատում/բաժանորդ: Ընդհատումների միջին տևողության ցուցանիշի միջին մեծության փոփոխությունը հիմնականում պայմանավորված է Վայոց ձորում և Շիրակի մարզում ցուցանիշների վատթարացմամբ: Մասնավորապես Վայոց Ձորում ընդհատումների միջին տևողության ցուցանիշն աճել է 10,4 անգամ, իսկ ընդհատումների միջին հաճախականության ցուցանիշը՝ 6,1 անգամ:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1 -	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 14-ի №399Լ որոշումը «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին».
Որոշում 2 -	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 27-ի №9Ա որոշումը «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2016-2018 թվականի ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին».
Որոշում 3 –	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 14-ի №400Ա որոշումը «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի ներդրումային ծրագրի ճշգրտումներին համաձայնություն տալու մասին».
Հաշվետվություն-	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2016 թվականին իրականացված փաստացի ներդրումների վերաբերյալ ընկերության 2017 թվականի մայիսի 15-ի №01-25/1866 գրությամբ ներկայացված հաշվետվությունը.
Տեղեկատվություն -	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի սպառողների սպասարկման որակի ցուցանիշները 2015, 2016 թվականներին http://psrc.am/am/sectors/gas/service-quality-indicators 2015, 2016 թվականների ընթացքում գազամատակարարման համակարգում սպառողների գազամատակարարման ընդհատումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն.